Կ-516-20.02.2023-ԱՀ-011

Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ԱՐԱՐՈՂԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական արարողակարգի մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-291-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը «Ազգային ժողովի նախագահի» բառերից հետո լրացնել «,փոխվարչապետերի» բառով, «արտաքին հարաբերությունների գերատեսչությունների ղեկավարների,» բառերից հետո լրացնել «փոխվարչապետերի,» բառով, հանել «եւ այլ» բառերը:

Հոդված 2. Օրենքի 8-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասի աղյուսակը «օտարերկրյա պետության արտաքին հարաբերությունների գերատեսչության ղեկավարի պաշտոնական այց» տողից առաջ լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր տողով՝

օտարերկրյա պետության փոխվարչապետի այց	ղեկավար եւ մինչեւ 2 ուղեկցող անձ

2) 5-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«5. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ծախսերի ֆինանսավորումն իրականացվում է պետական արարողակարգի ծառայության ներկայացրած հաշվետվության հիման վրա՝ համաձայն փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի՝ վարչապետի որոշմամբ:»,

3) 6-րդ մասում «Կառավարության» բառը փոխարինել «վարչապետի» բառով,

4) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 7-րդ մասով.

«7. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված միջազգային կազմակերպությունների եւ այլ միջազգային կառույցների ցանկը սահմանվում է վարչապետի որոշմամբ:»:

Հոդված 3. Օրենքի ամբողջ տեքստում «միջազգային կազմակերպությունների» բառերից հետո լրացնել «եւ այլ միջազգային կառույցների» բառերով:

Հոդված 4. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1.Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:
2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:

Կ-516-20.02.2023-ԱՀ-011/1

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ԱՐԱՐՈՂԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ~~ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ~~
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական արարողակարգի մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-291-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը «Ազգային ժողովի նախագահի» բառերից հետո լրացնել «,փոխվարչապետերի» բառով, «արտաքին հարաբերությունների գերատեսչությունների ղեկավարների,» բառերից հետո լրացնել «փոխվարչապետերի,» բառով, ~~«միջազգային կազմակերպությունների» բառերից հետո լրացնել «եւ այլ միջազգային կառույցների» բառերով,~~ հանել «եւ այլ» բառերը:

Հոդված 2. Օրենքի 8-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասի աղյուսակը «օտարերկրյա պետության արտաքին հարաբերությունների գերատեսչության ղեկավարի պաշտոնական այց» տողից առաջ լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր տողով՝

օտարերկրյա պետության փոխվարչապետի այց	ղեկավար եւ մինչեւ 2 ուղեկցող անձ

~~իսկ աղյուսակի վերջին տողը «կազմակերպության» բառից հետո լրացնել «եւ այլ միջազգային կառույցների» բառերով,~~

2) 5-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«5. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ծախսերի ֆինանսավորումն իրականացվում է պետական արարողակարգի ծառայության ներկայացրած հաշվետվության հիման վրա՝ համաձայն փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի՝ վարչապետի որոշմամբ:»,

3) 6-րդ մասում «Կառավարության» բառը փոխարինել «~~Վ~~վարչապետի» բառով,

4) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 7-րդ մասով.

«7. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված միջազգային կազմակերպությունների եւ այլ միջազգային կառույցների ցանկը սահմանվում է վարչապետի որոշմամբ:»:

Հոդված 3. Օրենքի ամբողջ տեքստում «միջազգային կազմակերպությունների» բառերից հետո լրացնել «եւ այլ միջազգային կառույցների» բառերով:

Հոդված ~~3~~4. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:
2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՊԵՏԱԿԱՆ ԱՐԱՐՈՂԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-516-20.02.2023-ԱՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Կառավարություն	**Վերնագիր**	Նախագծի վերնագրից առաջարկում ենք հանել երկրորդ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» բառերը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը:	Ընդունվել է	Ընդունվել է
2.	Կառավարություն	**1-ին հոդված**	1. Նախագծի 1-ին հոդվածից առաջարկում ենք հանել՝ «միջազգային կազմակերպությունների» բառերից հետո լրացնել «եւ այլ միջազգային կառույցների» բառերով» բառերը: Փոփոխությունը պայմանավորված է նրանով, որ Օրենքում, բացի վերոնշյալ երկու կարգավորումներից առկա են	Ընդունվել է	Ընդունվել է

			նաև բազում այլ կարգավորումներ միջազգային կազմակերպությունների վերաբերյալ, որտեղ սակայն, միաջազգային կառույցների վերաբերյալ լրացում չի կատարվում:		
3.	Կառավարություն	**2-րդ հոդված**	1. Առաջարկում ենք 2-րդ հոդվածի 1-ին կետից հանել «իսկ աղյուսակի վերջին տողը «կազմակերպության» բառից հետո լրացնել «եվ այլ միջազգային կառույցների» բառերով» բառերը: Փոփոխությունը պայմանավորված է նրանով, որ Օրենքում, բացի վերոնշյալ երկու կարգավորումներից առկա են նաև բազում այլ կարգավորումներ միջազգային կազմակերպությունների վերաբերյալ, որտեղ, սակայն, միջազգային կառույցների վերաբերյալ լրացում չի կատարվում: 2. Նախագծի 2-րդ հոդվածի 3-րդ կետում «Վարչապետի» բառը փոխարինել «վարչապետի» բառով:	Ընդունվել է	Ընդունվել է
4.	Կառավարություն	**2-րդ հոդվածից հետո լրացվող նոր 3-րդ հոդված**	1-ին և 2-րդ հոդվածների փոփոխություններով պայմանավորված առաջարկում ենք ավելացնել նոր 3-րդ հոդված՝ հետևյալ բովանդակությամբ.	Ընդունվել է	Ընդունվել է

			«***Հոդված 3.*** Օրենքի ամբողջ տեքստում «միջազգային կազմակերպությունների» բառերից հետո լրացնել «եւ այլ միջազգային կառույցների» բառերով: Ըստ այդմ հոդվածների համարա-կալումը փոխվել է:		
5.	Կառավարություն	3-րդ հոդված (լրամշակված 4-րդ)	Նախագծի 3-րդ (լրամշակված 4-րդ) հոդվածը խմբագրվել է՝ լրացվել է վերնագիր և 2-րդ մաս հետևյալ բովանդակությամբ՝ «***Հոդված 4. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ*** 1.Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: 2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:»:	Ընդունվել է	Ընդունվել է